Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1181-03.11.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի նախավերջին չհամարակալված պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**խորհրդատվական կենտրոն՝** անշարժ գույքի պետական ռեգիստրի կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է անշարժ գույքի պետական ռեգիստրի գործառույթների եւ ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվությունների եւ պարզաբանումների տրամադրում, անշարժ գույքի պետական ռեգիստրի գործառույթների իրականացման համար դիմումների ընդունում եւ այդ գործառույթների արդյունքում կազմված փաստաթղթերի տրամադրում, եւ որտեղ իրականցվում է ստորագրության իսկության ճանաչման նպատակով պայմանագրերի ստորագրում.»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում «սպասարկման գրասենյակ» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոն» բառերով:

Հոդված 3. Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասում «անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը» բառերը փոխարինել «Կառավարությունը» բառով:

Հոդված 4. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում «սպասարկման գրասենյակ» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոն» բառերով:

Հոդված 5. Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «սպասարկման գրասենյակում» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոնում» բառերով:

Հոդված 6. Օրենքի 48-րդ հոդվածի.

1) 3-րդ մասում «սպասարկման գրասենյակում» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոնում» բառերով,

2) 4-րդ մասում «սպասարկման գրասենյակ» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոն» բառերով,

3) 5-րդ մասում «սպասարկման գրասենյակում» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոնում» բառերով:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 1-ից:

Կ-1181-03.11.2025-ՏՀ-011/10 *Լրամշակված նախագիծ*

Երկրորդ ընթերցում

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի նախավերջին չհամարակալված պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**խորհրդատվական կենտրոն՝** անշարժ գույքի պետական ռեգիստրի կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է ~~պայմանագրերի կողմերի ստորագրությունների իսկության ճանաչումը,~~ անշարժ գույքի ~~գրանցման, դրանցպետական~~ ռեգիստրի գործառույթների եւ ընթացակարգերի վերաբերյալ ~~տեղեկատվության տրամադրման, անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջականության, այդ գործընթացներում առաջացած խոչընդոտների վերացման, պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալների եւ կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման վերաբերյալ խորհրդատվության իրականացումը, ինչպես նաեւխորհրդատվությունների եւ պարզաբանումների տրամադրում,** անշարժ գույքի պետական ռեգիստրի գործառույթների իրականացման համար դիմումների ~~ընդունումը~~ընդունում եւ այդ գործառույթների արդյունքում կազմված փաստաթղթերի

~~տրամադրում~~ը տրամադրում, եւ որտեղ իրականցվում է ստորագրության իսկության ճանաչման նպատակով պայմանագրերի ստորագրում.»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում «սպասարկման գրասենյակ» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոն» բառերով:

Հոդված 3. Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասում «անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը» բառերը փոխարինել «Կառավարությունը» բառով:

Հոդված 4. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում «սպասարկման գրասենյակ» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոն» բառերով:

Հոդված 5. Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «սպասարկման գրասենյակում» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոնում» բառերով:

Հոդված 6. Օրենքի 48-րդ հոդվածի.

1) 3-րդ մասում «սպասարկման գրասենյակում» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոնում» բառերով,

2) 4-րդ մասում «սպասարկման գրասենյակ» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոն» բառերով,

3) 5-րդ մասում «սպասարկման գրասենյակում» բառերը փոխարինել «խորհրդատվական կենտրոնում» բառերով:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1181-03.11.2025-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1181-03.11.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Բավարար հստակություն ապահովելու և խորհրդատվական կենտրոնի կողմից իրականացվող գործառույթների շրջանակը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով ներկայացված հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**խորհրդատվական կենտրոն՝** անշարժ գույքի պետական ռեգիստրի կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է անշարժ գույքի պետական ռեգիստրի գործառույթների եւ ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվությունների եւ պարզաբանումների տրամադրում, անշարժ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			գույքի պետական ռեգիստրի գործառույթների իրականացման համար դիմումների ընդունում եւ այդ գործառույթների արդյունքում կազմված փաստաթղթերի տրամադրում, եւ որտեղ իրականցվում է ստորագրության իսկության ճանաչման նպատակով պայմանագրերի ստորագրում.»:		